ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորայք համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Գորայք, (094) 405252 gorayq.syuniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 16-Ա

2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 01-ԻՆ ԳՈՐԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին, 35-րդ հոդվածի 1-ին մասի և 24-րդ կետերով, **որոշում եմ.**

1. 2019 թվականի մարտի 01-ին ժամը 14:00-ին հրավիրել Գորայք համայնքի ավագանու արտահերթ նիստ: /օրակարգը կցվում է/

2. Աշխատակազմի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով ապահովել նիստի կայացման գործընթացը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՐՏՅՈՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

20 19 թ. փետրվարի 27
գ.Գորայք

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 01-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորայք համայնքի ղեկավարի վարձատրության չափը, <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորայքի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին: Սառնակունք բնակավայրի նախադպրոցական ուսումնական հաստատություն <<ՀՈԱԿ>> -ին սուբսիդիա տրամադրելու , աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին: /զեկ. Համայնքի ղեկավար՝ Ա. Առուստամյան/
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորայք համայնքի տարածքում օրենքով սահմանված 2019 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը և մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին: /զեկ. Համայնքի ղեկավար՝ Ա. Առուստամյան/
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորայք համայնքի 2019թ.-ի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին: /զեկ. Համայնքի ղեկավար՝ Ա. Առուստամյան/
4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորայք համայնքի 2018 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին: /զեկ. Համայնքի ղեկավար՝ Ա. Առուստամյան /
5. 2019 թվականի Գորայք համայնքի տարեկան բյուջեն հաստատելու մասին: /զեկ. Համայնքի ղեկավար՝ Ա. Առուստամյան/